«Ծրագրի կարևորագույն ձեռքբերումներից էր շահերի բախման վերաբերյալ թիրախավորված հանրային քննարկման ծավալումը»:

Միքայել Հոփհաննիսյան, ԵՀՀ ծրագրի ղեկավար

Թրանսփարենսի
Ինիշիատիվ
հակալոտուսյան
կենտրոնի և Եվրասիա
համագործակցություն
հիմնադրամի «Պետական
մարմիններում շահերի
բախման մոնիթորինգ»
հրապարակում
“Monitoring of Conflict
of Interest in Central Public
Institutions” publication
produced by Transparency
International Anticorruption
Center and Eurasia Partner-
ship Foundation



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԿԵՏԻՆԳԱՆԵՐԻ ՄԱՐԿԵՏԻՆԳԱՆԵՐԻ ՄԱՐԿԵՏԻՆԳԱՆԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆ 2014

Մեր զինքը պահել է Եվրոպայի Միության թիմնախաղ/տնային խաղով
-Մեր ներքին թիմը ներկայումս քրեական / հասարակական ենթաշտկալ քաղաքի բովանդակ
հիմնադրված քաղաքականության խաղախաղի հիմնադրված քաղաքականության / քաղաքի
քաղաքականության / Փաստաթղթի բովանդակության հաստատված քաղաքականության են
հեղինակներն են այն դեպի քաղաքականության / խաղախաղի / թիմնախաղի
խաղախաղության տեսանկյունից քաղաքականության

Direct quotation: “There are numerous gaps in Law that intentionally or accidentally exist in legislation. Hence, conflict of interest is not regulated and corruption processes get off scot-free.”

Sona Ayvazyan, TIAC Deputy Director

*Mikayel Hovhannisyan,
Program Manager at Eurasia Partnership Foundation*

Ինստիտուտների կատարողականի վերահսկողություն

Հարաշահումներ և բռնություններ Բյուրեղավանի գիշերօթիկ դպրոցում

2014թ. ապրիլի 18-ին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակա-կոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող մի քանի կազմակերպություն և մի խումբ ակտիվիստներ, հիմք ընդունելով գիշերօթիկ հաստատության աշխատակիցների՝ ԶԼՄ-ներում հրապարակված բաց [նամակը](#), ՀՀ գլխավոր դատախազին են ներկայացրել հանցագործության մասին հաղորդում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ում կատարվող անօրինությունների, մասնավորապես, տնօրենի կողմից կատարվող յուրացումների և չարաշահումների, երեխաների նկատմամբ ծեծի և բռնության, ինչպես նաև նախարարության, մասնավորապես, աշխատանքի և սոցիալական հարցերի փոխ-նախարար Ֆիլարետ Բերիկյանի կողմից հնարավոր հովանավորչության վերաբերյալ:

Հարուցվել է քրեական գործ, սակայն նախաքննական մարմինը հաղորդումը պատշաճ քննության չի ենթարկել, քննությունն ընթացել է միակողմանի, հաղորդման մեջ նշված հանգամանքները լրիվ չեն բացահայտվել և համապատասխան մեղադրանքներ չեն առաջադրվել, ինչպես նաև գործով օբյեկտիվ և բազմակողմանի քննություն չի իրականացվել:

2014թ. նոյեմբերի 12-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել բողոք՝ հանցագործության մասին հաղորդումը պատշաճ քննության չենթարկելու, գործի բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն չիրականացնելու և նշված հանգամանքների շուրջ դատախազի կողմից վերահսկողություն չիրականացնելու դեմ:

Overseeing the Performance of Institutes

Abuse and violence in Byureghavan Boarding school

Based on boarding school employees' open letter published in mass media, on April 18, 2014, Transparency International Anticorruption Center NGO, a number of child protection organizations and a group of activists, reported crime to the Prosecutor General of Armenia on unlawfulness, in particular embezzlement and abuse committed by the Director of Byureghavan children care and protection boarding institution SNCO under the Ministry of Law and Social Issues, assault and violence against children, as well as possible patronage by the Ministry of Law and Social Issues, in particular by the Deputy Minister Filaret Berikyan. Criminal case was initiated, however the investigation body failed to duly investigate the crime reporting, the investigation was conducted in one-sided manner, the circumstances mentioned in the reporting were not completely exposed, no particular charges were brought, and no impartial and comprehensive investigation was conducted.



«Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի ցուցանակը
Byureghavan children care and protection boarding institution SNCO's notice

Բողոքի քննության ընթացքում փոխվել է քրեական գործի ենթակայությունը, վարույթ իրականացնող մարմինը կատարել է բազմաթիվ քննչական և դատավարական գործողություններ, երեք անձ ներգրավվել են որպես մեղադրյալ և ևս երեքը՝ որպես կասկածյալ: Կայանավորվածների թվում է նաև Բյուրեղավանի գիշերօթիկի դպրոցի նախկին տնօրեն Գայանե Մարգարյանը: Նշված հանգամանքներում, ըստ էության, կատարվել են բողոքում նշված պահանջները, ուստի ԹԻՀԿ-ը հրաժարվել է դատարանում իր բողոքի քննությունից: ԹԻՀԿ-ն կշարունակի հետևել սույն գործով զարգացումներին նաև 2015թ.:

Էթիկայի խախտում ՀՀ բնապահպանության նախարարի կողմից

2014թ. ապրիլի 4-ին Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը դիմել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով՝ խնդրելով վարույթ հարուցել և քննության առնել ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի կողմից պաշտոնավարման ընթացքում էթիկայի կանոնները խախտելու փաստը: Դիմումը վերաբերել է Երևանում անցկացվող «Պատասխանատու հանքարդյունաբերություն. մարտահրավերներ և հնարավորություններ» թեմայով միջազգային կոնֆերանսի ընթացքում տեղի ունեցած **միջադեպին**՝ բնապահպան ակտիվիստների և ՀՀ բնապահպանության նախարար Հարությունյանի միջև, որի ընթացքում նախարարը վիրավորանքներ է ուղղել ակտիվիստներից մեկին: Հանձնաժողովը **մերժել** է ԹԻՀԿ դիմումը և իր նախաձեռնությամբ հարուցել է վարույթ նույն հարցով: Հարուցված վարույթի արդյունքում մայիսի 23-ի **որոշմամբ** հանձնաժողովը հաստատել է Արամ Հարությունյանի կողմից էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ եզրակացությունը և առաջարկել է ՀՀ բնապահպանության նախարարությանը եզրակացությունը տեղադրել նախարարության կայքէջում: Հանձնաժողովը նաև որոշել է եզրակացությունն ուղարկել ՀՀ նախագահին և ՀՀ վարչապետին՝ որպես նախարարության վերադասի:

On November 12, 2014 a criminal complaint was filed in common jurisdiction court of Kentron and Nork-Marash administrative districts of Yerevan, on failing to properly examine the report, failing to conduct impartial, comprehensive and complete investigation, and to oversee the mentioned circumstances by the prosecutor.

During the investigation of the complaint the subordination of the criminal case was changed. The body carrying out proceedings undertook numerous investigative and trial actions, three people were engaged as defendants and three more as suspects. Among those detained are Gayane Margaryan, former Director of Byureghavan boarding school. Since the requirements in the complaint regarding the mentioned circumstances were met, TIAC discontinued investigation of the complaint filed in court but will follow up developments of this case in 2015.

Violation of Codes of Ethics by Minister of Nature Protection

On April 4, 2014 Transparency International Anticorruption Center applied to the Commission on Ethics of High-Ranking Officials of Armenia with a request to initiate proceedings and examine the issue of violation of the rules of ethics by Aram Harutyunyan, Minister of Nature Protection. The application was filed due to an incident that occurred between eco-activists and Minister of Nature Protection Aram Harutyunyan during an International Conference “Responsible Mining in Armenia: Challenges and Opportunities” when the Minister insulted an activist. The commission rejected TIAC’s application and initiated proceedings on the same issue on its own initiative. As a result of the proceedings the commission confirmed the conclusion on violation of rules of ethics by Aram Harutyunyan and offered the Ministry of Nature Protection to post the conclusion on the website of the Ministry. The Commission also decided to send the conclusion to RA President and RA Prime Minister as higher authorities.

«Աֆրիկյանների տուն» հուշարձան-շենքը՝ կառուցապատման զոհ

2014 թ. հունիսի 16-ին ԹԻՀԿ-ն հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն, (պատճենը՝ ՀՀ ոստիկանություն) Աֆրիկյանների տուն հուշարձան-շենքի քանդման փաստով: Հաղորդումը ներկայացվել է այն հիմքով, որ տեղափոխման պատրվակով իրականացրած ապամոնտաժման անվան տակ իրականում քանդվել է հուշարձան-շենքը, որով խախտվել է ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի, 40-րդ հոդվածի, Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին Կոնվենցիայի 5-րդ հոդվածի, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջները, ինչն առաջացնում է պատասխանատվություն ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածով:

Հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության Կենտրոնականի քննչական բաժինը հուլիսի 17-ին կայացրել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Դրանից 11 օր անց՝ հուլիսի 28-ին, ԹԻՀԿ-ն բողոք է ներկայացրել Կենտրոնի և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազություն՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին Կենտրոնականի քննչական բաժնի որոշման օրինականությունը ստուգելու պահանջով և ստացել մերժում: Դրան հետևել է սեպտեմբերի 16-ին բողոքի ներկայացումը Կենտրոնի և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ՀՀ ոստիկանության Կենտրոնականի քննչական բաժնի և Երևան քաղաքի դատախազության որոշումները վերացնելու պահանջով:

ԹԻՀԿ դատական պայքարը Աֆրիկյանների տան համար կշարունակվի նաև 2015թ:

Աֆրիկյանների տուն հուշարձան-շենք
House of Afrikyans monument-building

“Afrikyans House” monument-building as a victim of construction

On June 16, 2014 TIAC filed an application on crime to RA Prosecutor General's Office (copy to RA Police) on demolishing Afrikyan House. The crime reporting was filed on the ground that the monument building was demolished under the pretext of dismantling it, thus violating the requirements of article 11, Article 40 of RA Constitution, Article 5 of Convention for the Protection of the Architectural Heritage of Europe, Article 21 of RA Law on Preservation and Utilization of Immovable Monuments of History and Culture and of the Historic Environment, entailing responsibility by article 264 of RA Criminal Code.

Based on the report Central investigation department of RA Police on July 17 made a decision to reject opening criminal case due to absence of corpus delicti.

Eleven days later on July 28 TIAC filed a complaint to the prosecutor's office of Kentron and Nork-Marash administrative districts, with a request on check the legality of rejecting opening a criminal case by Central investigation department of RA Police and was rejected.

Later a complaint was filed on September 16 to general jurisdiction court of Kentron and Nork-Marash administrative districts to abolish the decisions of the Central investigation department of RA Police and Yerevan city prosecutor's office.

TIAC's litigation for Afrikyan House will be continued in 2015 as well.





Հանրային մասնակցություն Հանրային քարոզչություն

Ծրագրի անվանում՝ Ժամանակն է սթափվել

Ծնորհատու կազմակերպություն՝ Թրանսփարենսի
ինթերնեշնլի քարտուղարություն

Դրամաշնորհի չափ՝ 2,630,000.00 ՀՀ դրամ

Տևողություն՝ 01.12.2012 - 30.11.2014

Նպատակ՝ Նախագծի նպատակն է քարոզչամիջոցների օգնությամբ կապ հաստատել հնարավորինս շատ մարդկանց հետ՝ մասնավորապես ցուցադրելով կոռուպցիայի գինը մարդու համար և իրականացնելով իշխանությունների և քաղաքացիների վարքագծի փոփոխության ջատագովություն:

Ինչ արվեց՝ «Ժամանակն է սթափվել» ծրագիրը տարբերվում է ԹԻՀԿ շատ նախագծերից նրանով, որ փորձում է հնարավորինս մերձ լինել հանրությանը, ցույց տալ Հայաստանում առկա համակարգային խնդիրների ազդեցությանը ՀՀ բնակիչների/քաղաքացիների առօրյա կյանքի վրա: Մասնավորապես, 2014թ. փետրվարին ամփոփվեց 2013 թ. նոյեմբերին «Ժամանակն է սթափվել» հակակոռուպցիոն քարոզարշավի շրջանակներում հայտարարված ֆորում-թատրոնի համար գրված պիեսների մրցույթը: Հաղթող ճանաչվեց գրող, կինոսցենարիստ, լրագրող Համբարձում Համբարձումյանը: 2014թ. «Արտ-Լաբորատորիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ իրականացվեց «փողոցային» քարոզարշավ կոռուպցիայի դեմ. Երևանի շուրջ 150 հանրային վայրերում՝ կենտրոնական և արվարձանային փողոցներ, այգիներ, նրբանցքներ, հայտնվեցին կոռուպցիան սահմանող գրաֆիտներ: Ակցիան լայնորեն լուսաբանվեց և տարածվեց սոցիալական ցանցերում:

Public Participation Public campaign

Project Title: Time to Wake Up

Donor: Transparency international
Secretariat

Budget: 2,630,000.00 AMD


Implementation period: 01.12.2012 - 30.11.2014

Project goal: The project aims to use campaign tools to communicate to a greater number of people, particularly by showing the human cost of corruption; advocate for change in the behavior of governments and individuals

Implementation: “Time to Wake Up” project differs from many TIAC projects in that it aims to be as close to public as possible and to show the impact of systemic problems of Armenia on the daily lives of its residents/citizens. In particular, in February 2014 the contest for submission of forum theater scenario, announced in 2013 November was summed up. Hambardzum Hambardzumyan, writer, scriptwriter, and journalist was announced as winner. In 2014 “Art-Laboratory” NGO in cooperation with TIAC, organized street campaign against corruption. Stencil graffiti defining corruption appeared in nearly 150 public spaces – in central and suburban streets, gardens and lanes of Yerevan. The action was widely covered and disseminated through social media.



Ֆորում-թատրոնի համար գրված պիեսների մրցույթի հաղթող գրող, կինոսցենարիստ, լրագրող Համբարձում Համբարձումյան
Hambardzum Hambardzumyan, writer, scriptwriter, and journalist as winner of forum theater scenario



Կոռուպցիան սահմանող գրաֆիտիներ
Stencil graffiti defining corruption

«Սովորաբար կոռուպցիայի մասին խոսում են լուրջ դեմքով, փողկապով՝ սեղանի շուրջ նստած մարդիկ, ինչ-որ կարևոր հայտարարություններ են անում, իսկ այստեղ փորձ արվեց կոռուպցիան ներկայացնել ավելի ստեղծագործաբար»:

Ծրագրի ղեկավար Լենա Նազարյան

“Generally people speak of corruption with serious faces and ties, sitting at the tables, making some serious statements. Here an attempt was made to present corruption more creatively.”

Lena Nazaryan, Project Coordinator

Ծրագրի անվանում՝ Քաղաքական իրավունքների և մասնակցության խթանումը կառավարման հարցերում

Շնորհատու կազմակերպություն՝ Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան

Դրամաշնորհի չափ՝ 4,678,465.00 ՀՀ դրամ

Տևողություն՝ 20.01.2014 - 31.07.2014

Նպատակ՝ Ծրագրի նպատակն է խթանել քաղաքական իրավունքների և կառավարման խնդիրներին մասնակցությունը՝ ստեղծելով հասարակական վերահսկողության հարթակ ՀՀ ոստիկանության կողմից հավաքների ազատության և արտահայտման ազատության ոտնահարմանն ուղղված տեղեկատվության հավաքման, պահպանման և ցուցադրման համար, ինչպես նաև լավ կառավարմանն ու որոշումների կայացմանը հասարակական մասնակցության խթանմանն ուղղված ԹԻՀԿ գրադարանի առցանց քարտարանի ստեղծմամբ ավելի քան 4000 անուն գրականությունը հասանելի դարձնելու համար:

Ինչ արվեց՝ Ծրագրի իրականացման արդյունքում ստեղծվեց «Ոստիկանության կամայականությունների շտեմարան» քրաուդ-սորսինգային ռեսուրսը, որտեղ գտնվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հավաքների ազատության իրավունքի խախտումները (խռչընդոտումներ, բռնություններ, ձերբակալություններ և այլն) փաստող լուսանկարներ և տեսանյութեր: Շտեմարանը լրացվում է համացանցային բոլոր օգտատերերի, ակնատեսների կողմից:

Ծրագրի շնորհիվ ստեղծվեց նաև ԹԻՀԿ գրադարանի առցանց քարտարանը, որը պետք է պարունակի 4000-ից ավել անուն մասնագիտական գրականություն կոռուպցիայի, ընտրությունների, հանրային ռեսուրսների կառավարման և այլնի մասին:

ԹԻՀԿ գրադարանը
TIAC library

Project title: Promotion of Political Rights and Participation in Governance Matters

Donor(s): Open Society Foundations – Armenia

Budget: AMD 4,678,465.00


Implementation period: 20.01.2014 - 31.07.2014

Project goal: The project goal is to promote political rights and participate in governance matters by developing a crowd-sourcing platform that will collect, store, and expose incidents of unlawful practices by the Armenian police violating freedom of assembly and freedom of expression. The project will also develop an online library catalogue for TIAC, providing access to more than 4,000 items of literature on good governance and public participation in decision-making.

Implementation: In the course of the project implementation TIAC developed an online database, a crowdsourcing platform on unlawful acts of police for registering photos and videos documenting unlawful acts (impediments, violence, arrests, etc.) of the Armenian police forces during the peaceful assemblies. The platform is available on <http://vostikan-irakan.net>. Internet users and witnesses may enter data in the database.

Another accomplishment of the project is creation of TIAC online library catalogue to provide access to more than 4,000 items of specialized literature: corruption, elections, public resource management, etc.





Ծրագրի լոգոն
Project logo

ENGAGED CITIZENRY FOR RESPONSIBLE GOVERNANCE



ՊԱՅԱՆՔԱՏԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Ծրագրի անվանում՝ Թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում՝ քաղաքացիական հասարակության մասնակցության միջոցով

Շնորհատու կազմակերպություն՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն

Դրամաշնորհի չափ՝ 1,392,411,945.00 ՀՀ դրամ
Տևողություն՝ 24.11.2014 - 23.11.2019

Նպատակ՝ «Պախանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» կարճ անվամբ ծրագրի նպատակն է ակտիվացնել քաղաքացիների ներգրավվածությունն ու վերահսկողությունը Հայաստանում թափանցիկություն ու հաշվետվողականություն խթանող բարեփոխումների գործընթացներում: Դրան հասնելու համար նախատեսվում է զարգացնել քաղաքացիական հասարակության՝ քաղաքացիներին ներգրավելու և նրանց շահերն արտահայտելու կարողությունները, իրականացնել պետական ինստիտուտների կատարողականի, պաշտոնյաների վարքագծի և քաղաքականության իրականացման մոնիթորինգ, մատուցել անկախ և արժանահավատ տեղեկատվություն կոռուպցիոն երևույթների մասին և ձևավորել բարենպաստ միջավայր քաղաքացիական հասարակության համար:

Project Title: Promoting Transparency and Accountability through Advanced Civil Society Participation

Donor(s): U.S. Agency for International Development

Budget: AMD 1,392,411,945.00

Implementation period: 24.11.2014 - 23.11.2019

Project goal: The goal of the project with short name “Engaged Citizenry for Responsible Governance” is to increase civic engagement in and oversight of reforms in Armenia aimed at improving of transparency and accountability of government actions and policies. To achieve that goal it is provided to improve and sustain civil society’s ability in order to engage citizens and articulate their interests, to monitor government institutions, officials’ behavior and policy process; to provide independent and reliable information on corruption occurrences, and to create enabling environment for civil society.

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի անվանում՝ Ազատ և արդար ընտրությունների խթանումը Հայաստանի մարզերում (2014 -15 թթ.)


Շնորհառու կազմակերպություն(ներ)՝ Ժողովրդավարության ազգային հիմնադրամ

Դրամաշնորհի չափ՝ 39,467,250.00 ՀՀ դրամ

Տևողություն՝ 01.10.2013 - 30.09.2015

Նպատակ՝ Ծրագրի նպատակն է խթանել ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացումը Հայաստանի մարզերում:

Ինչ արվեց՝ «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության մեջ մտնում են Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը, Իրավունքի Եվրոպա միավորումը, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը: Նախաձեռնության շրջանակներում դիտորդական առաքելություն է իրականացվել 2014 թ. ՀՀ-ում կազմակերպված ՏԻՄ ընտրություններին (մարտի 9, հունիսի 8, հոկտեմբերի 19): Ընդհանուր առմամբ դիտարկվել են 30 համայնքների 39 տեղամասեր: Նախաձեռնության դիտորդները գրանցել են 85 ահազանգ, որոնցից 66-ի վերաբերյալ կազմվել են դիմումներ:



Ընտրությունների դիտարկման շտեմարան ԹԻԴԿ կայքում
Election observation database in TIAC website

ELECTIONS

Project Title: Promotion of Free and Fair Elections in Marzes of Armenia (2014-15)

Donor(s): National Endowment for Democracy

Budget: AMD 39,467,250.00

Implementation period: 01.10.2013 - 30.09.2015

Project goal: The project goal is to promote the conduct of free, fair and transparent elections in marzes of Armenia.

Implementation: “Citizen Observer” initiative is a coalition of civil society organizations that includes Transparency International Anticorruption Center, Europe in Law Association, Journalists’ Club “Asparez” and Helsinki Citizens’ Assembly Vanadzor office. Within the framework of the initiative TIAC conducted local government elections in 2014 (March 9, June 8, and October 19). Generally, 39 precincts of 30 communities were monitored. The observers of the initiative registered 85 alerts, of which about 66 applications were filed.

In the period preceding local government elections nearly 600 residents underwent 23 trainings during which the trainees received basic information on local government system, the competences of its various sectors, community resources, and other issues. The trainees were also distributed a booklet entitled “How to participate in local government” developed by TIAC especially for that purpose. The project also has a more detailed videoreport.

TIAC will continue observation of local government elections and awareness raising on local government system in 2015 as well, in particular focusing on increased awareness of the public on electoral standards and enhanced quality of participation in elections, activated public oversight, law enforcement and detection of electoral violations in Armenia on the day of elections.

ՏԻՄ ընտրություններին նախորդող ժամանահատվածներում տարբեր համայնքների շուրջ 600 բնակիչների համար անցկացվել են թվով 23 դասընթացներ, որոնց ընթացքում մասնակիցներին է ներկայացվել բազային տեղեկատվություն տեղական ինքնակառավարման համակարգի, նրա տարբեր հատվածների լիազորությունների, համայնքային ռեսուրսների և այլ հարցերի վերաբերյալ: Դասընթացների մասնակիցներին բաժանվել է նաև հատուկ այդ նպատակով ԹԻՀԿ կողմից մշակված «Ինչպես մասնակցել տեղական ինքնակառավարմանը» գրքույկը: Ծրագիրն ունի նաև առավել մանրամասն տեսահաշվետվություն:

ԹԻՀԿ-ն կշարունակի ՏԻՄ ընտրությունների դիտարկումը և տեղական ինքնակառավարման համակարգի վերաբերյալ իրազեկության բարձրացումը նաև 2015թ.՝ մասնավորապես, ուշադրություն դարձնելով ընտրական ստանդարտների հանդեպ հանրային իրազեկության ավելացմանը և ընտրություններին մասնակցության որակի բարձրացմանն ու ընտրությունների, օրենքի կիրառման և ընտրախախտումների արձանագրման հանդեպ հանրային վերահսկողության ակտիվացմանը:

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության գրքույկը ՏԻՄ ընտրությունների մասնակցության վերաբերյալ
 «Citizen Observer» Initiative's booklet on participation in local government elections

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դասընթացը դիտորդների համար, մայիս 2014
 «Citizen Observer» Initiative's training for observers, May 2014




Մարզերում երիտասարդներն իրենք հավակնություն չեն ցուցաբերում մասնակցելու համայնքային գործերին: Այնպիսի տպավորություն է, որ համայնքային գործերին երիտասարդը կարող է մասնակցել, միայն եթե շաբաթօրյակ լինի կամ ուրիշ մշակութային միջոցառում:

Ծրագրի ղեկավար Լենա Նազարյան

In Marzes of Armenia the youth does not aspire to participate in community affairs. There is such an impression that the youth may participate in community affairs if there is community work day or other cultural event.

Project manager Lena Nazaryan



Ծրագրի անվանում՝ Ընտրական պրակտիկաների բարեփոխմանն ուղղված շահերի պաշտպանություն

Շնորհատու կազմակերպություն՝ Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան

Դրամաշնորհի չափ՝ 2,052,079.50 դրամ

Տևողություն՝ 20.01.2014 – 30.06.2014

Նպատակ՝ Ծրագրի նպատակն է բարեփոխել ընտրական պրակտիկան:

Ինչ արվեց՝ Ծրագրի շրջանակում հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության 2012-2013 թթ. ընտրությունների էլեկտրոնային մոնիտորինգը» հետազոտությունը: Այն ամփոփում է ընտրողների քվեարկության մասնակցության և ընտրությունների արդյունքների մաթեմատիկական լիարժեք վերլուծական հաշվարկները, և հնարավորություն է տալիս բացահայտել ու առանձնացնել ընտրակեղծիքներով տեղամասերը, ընտրակեղծիքներ հազդեցության չափը ընտրությունների արդյունքների վրա և ընտրությունների առավել հնարավոր իրական արդյունքները:



Հայաստանի Հանրապետության 2012-2013 թթ. ընտրությունների էլեկտրոնային մոնիտորինգ
Electronic Monitoring of 2012-2013 Elections in the Republic of Armenia

Project Title: Advocacy for Improvement of Election Practices

Donor: Open Society Foundations – Armenia

Budget: AMD 2,052,079.50

Implementation period: 20.01.2014 – 30.06.2014

Project goal: The project goal is to improve election practice.

Implementation: “Electronic Monitoring of 2012-2013 Elections in the Republic of Armenia” research report was published within the scope of the project. It wraps up comprehensive mathematical analysis of voters’ participation and the results of election, enabling to reveal and single out the precincts where possible irregularities and fraud occurred, and to assess the impact of the revealed fraud on the results of election, and to present more feasible results of elections.

ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Օրհուսի կոնվենցիա

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ նոր օրենքը (ՇՄԱԳ օրենքը), որ մշակվել է Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի հանձնարարականներով, նախագծվել է ԹԻՀԿ ակտիվ մասնակցությամբ՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ: Այդուհանդերձ, օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից հունիսին՝ մեկ օրվա ընթացքում, զգալի փոփոխություններով և առանց դրանք նախապես հրապարակելու: Օրենքի փոփոխությանն ուղղված ջատագովության շրջանակում ԹԻՀԿ-ը [գիմել է Համաշխարհային բանկին](#): Ջատագովությունը հաջողությամբ է պսակվել և 2014 թ. օգոստոսին օրենքը մեծապես բարեփոխվել է՝ ներառելով ՔՀԿ-ների առաջարկությունները:

PUBLIC RESOURCES

Aarhus Convention

New RA Law on Environmental Impact Assessment and Review that was developed in line with recommendations of the Aarhus Convention Compliance Committee and with support of the World Bank was drafted with active participation of TIAC. However, the law was adopted by the Armenian parliament with significant changes and without due prior notification of changes, in June 2014 in a day. Hence, within the scope of advocacy for changes of law TIAC addressed a [statement](#) to the World Bank. This advocacy was a success and in August 2014 the Law was largely changed to include recommendations of CSOs.



Հանրային Ֆինանսներ

Հանրային գնումներ

Ծրագրի անվանում՝ Գնումների պրակտիկայի բարեփոխմանն ուղղված շահերի պաշտպանություն

Շնորհատու կազմակերպություն՝ Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան

Դրամաշնորհի չափ՝ 1,756,854.10 ՀՀ դրամ

Տևողություն՝ 20.01.2014 - 30.06.2014

Նպատակ՝ Ծրագրի նպատակն է բարեփոխել գնումների պրակտիկան:

Ինչ արվեց՝ Ծրագրի շրջանակում հրապարակվել է «ՀՀ պետական գնումների համակարգի մոնիտորինգ. 2011-2013 թթ» ([Մաս 1](#) և [Մաս 2](#)) հետազոտությունը: Այն դիտարկել է ՀՀ պետական գնումների քաղաքականության ոլորտը և մատնանշել առկա հիմնախնդիրները՝ մասնավորապես ուշադրություն դարձնելով գնումների պրակտիկայի ոչ թափանցիկ կողմերին:

2011- 2013 թթ. պետական գնումների համակարգի մոնիտորինգի արդյունքների
շնորհանդես, հունիս 2014

Presentation of the findings of 2011-2013 public procurement system monitoring, June 2014

«ՀՀ պետական գնումների համակարգի մոնիտորինգ. 2011-2013 թթ. հետազոտության կարևոր ձեռքբերումն է բողոքարկման քննության ընթացակարգերն առցանց դիտելու հնարավորությունը: Բացի այդ, կարևոր է բողոքների քննման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը գնումների պաշտոնական կայքում:»

*ԹԻՀԿ գնումների քաղաքականության
փորձագետ Արտակ Մանուկյան*

Public Finance

Public procurement

Project Title: Advocacy for Improvement of Procurement Practice

Donor: Open Society Foundations – Armenia

Budget: AMD 1,756,854.10

Implementation period: 20.01.2014 - 30.06.2014

Project goal: The project goal is to improve procurement practice.


Implementation: “Monitoring of Public Procurement System in the Republic of Armenia: 2011-2013” research report was published within the scope of the project. It observed public procurement policy in the Republic of Armenia and identified the current problems especially paying attention to non transparent aspects of procurement practice.



The key achievement of monitoring of 2011-2013 public procurement system of Armenia is online observation of complaint procedures. Besides, posting information on complaints examination on the official website of procurement in Armenia is also of importance.

Artak Manukyan, TIAC Procurement Expert

ՀՀ պետական գնումների համակարգի մոնիտորինգ. 2011-2013 թթ. մաս 1-2, Մաս 1-ի անգլերեն թարգմանություն
Monitoring of Public Procurement System in the Republic of Armenia 2011-2013, volume 1-2, English translation of volume 1



Օրագրի անվանում՝ ՀՀ պետական գնումների համակարգի մոնիտորինգը 2014-2015 թթ.

Ընդհանուր կազմակերպություն՝ Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան

Դրամաշնորհի չափ՝ 21,242,250.00 ՀՀ դրամ

Տևողություն՝ 01.10.2014 - 30.09.2015

Նպատակ՝ «ՀՀ պետական գնումների համակարգի մոնիտորինգը 2014-2015 թթ.» ծրագրի նպատակն է նպաստել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը Հայաստանում՝ աջակցելով պետական գնումների թափանցիկ ու հաշվետու կառավարմանը: Այն հետապնդում է հետևյալ խնդիրները՝

ա/ ՀՀ պետական գնումների վերաբերյալ օրենսդրության բացերի ու թերությունների վերհանում,

բ/ գնումների օրենսդրության՝ գործնականում իրականացման գնահատում,

գ/ գնումների գործընթացներում առկա կոռուպցիոն ռիսկերի ու հակաօրինական գործողությունների վերհանում,

դ/ գնումների մոնիտորինգի նախորդ ծրագրերի իրականացման արդյունքում մշակված առաջարկություններ կյանքի կոչմանը նպաստում:

Project Title: Monitoring of Armenian Public Procurement in 2014-2015

Donor: Open Society Foundations - Armenia

Budget: AMD 21,242,250.00

Implementation period: 01.10.2014 - 30.09.2015

Project goal: The goal of “Monitoring of Armenian Public Procurement in 2014-2015” project is to contribute to the formulation and implementation of effective anticorruption policies in Armenia through promoting transparent and accountable management of public finances. The objectives of the project are:

a) to identify the gaps and shortcomings of the Armenian legislation on public procurement,

b) to assess the implementation of the procurement legislation in practice,

c) to identify the corruption risks and malpractices in procurement processes,

d) to promote the recommendations developed as a result of the implementation of previous monitoring projects.

Ծրագրի անվանում՝ Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ վերահսկիչ պալատի տեղեկանքի որակի բարելավմանն ուղղված ջատագովություն

Շնորհատու կազմակերպություն՝ Բյուջեի և քաղաքականության առաջնահերթությունների կենտրոն, Վաշինգտոն, ԱՄՆ

Դրամաշնորհի չափ՝ 4,100,000.00 ՀՀ դրամ

Տևողություն՝ 01.11.2014 - 31.07.2015

Նպատակ՝ Ծրագրի նպատակն է խթանել պետական բյուջեի կազմման հաշվետվողականությունը և դրա նկատմամբ վերահսկողությունն ու պետական բյուջեի թափանցիկ ու հաշվետու կառավարումը: Դրան հասնելու համար անհրաժեշտ է բարելավել Կառավարության կազմած բյուջեի որակը, առավել հասցեականացնել դոնորական տեխնիկական աջակցությունը՝ ուղղված հանրային ֆինանսների կառավարման ոլորտում թափանցիկության մեծացմանը, բարձրացնել իրազեկությունը՝ ԲՀԿ-ների կողմից բյուջետային տվյալների առավել հաճախ օգտագործման միջոցով:

Project Title: Advocacy for the Improvement of the Audit Report Produced by the Chamber of Control of the Republic of Armenia

Donor: Center on Budget and Policy Priorities (the “CBPP”), Washington, DC,

Budget: AMD 4,100,000.00

Implementation period: 01.11.2014 - 31.07.2015

Project goal: The project goal is to enhance accountability in and oversight on budget formulation and the implementation of transparent and accountable management of public finances. In order to achieve that goal it is necessary that the quality of the Audit Report produced by the Chamber of Control be improved, donors make their technical assistance to the government more targeted towards transparency in Public Finance Management (PFM) reform, CSOs be enabled to have access to information relevant to their activities.

ՀՀ պաշտպանության համակարգ

Ծրագրի անվանում՝ Թափանցիկության և հաշվետվողականության խթանումը ՀՀ պաշտպանության համակարգում

Շնորհատու կազմակերպություններ՝ ԱՄՆ ՄԶԳ, Քաունթերփարթ Ինթերնեշնլ - Հայաստան

Դրամաշնորհի չափ՝ 4,000,000.00 ՀՀ դրամ
Տևողություն՝ 01.11.2013 - 30.06.2014

Նպատակ՝ Ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ պաշտպանության համակարգում թափանցիկության ու հաշվետվողականության ավելացմանը, ինչին հնարավոր է հասնել ոչ միայն կառավարության բարեփոխումների միջոցով, այլև փոփոխություններին միտված, գիտելիքներով ու կարողություններով օժտված քաղաքացիական հասարակության դերակատարների հարաճուն պահանջից ելնելով:

Ինչ արվեց՝ 2011թ. ի վեր ԹԻՀԿ-ն ներգրավված է պաշտպանության ոլորտում գործող համակարգի թափանցիկությունն ավելացնելուն և կոռուպցիոն ռիսկերը բացահայտելուն և կրճատելուն ուղղված գործողություններում: Այդ շրջանակում 2014թ. ԹԻՀԿ-ն օգտագործեց Թրանսփարենսի Ինթերնեշնլի մշակած գործիքներից մեկը՝ «պաշտպանության հաստատությունների օրինավորության համաթիվը», որը հնարավորություն է տալիս գնահատել ոլորտում առկա ընթացակարգերն ու գործընթացները, համադրել դրանք աշխարհի այլ երկրների փորձի հետ և արդեն կիրառվել է աշխարհի 82 երկրներում: Պաշտպանության հինգ ոլորտներում՝ քաղաքական, ֆինանսական, անձնակազմ,

Defense Sector in Armenia

Project title: Promoting Transparency and Accountability in the Defense Sector in Armenia

Donor: USAID, Counterpart International - Armenia

Budget: AMD 4,000,000.00

Implementation period: 01.11.2013 - 30.06.2014

Project goal: The project goal is to increase transparency and accountability in the defense sector of Armenia. It is achieved through not only government reforms but also through an increased demand of civil society actors, equipped with knowledge and capacity to promote change.

Implementation: Since 2011 TIAC has been enrolled in various activities aimed to increase transparency in the defense sector, and to expose and reduce corruption risks. Within this framework TIAC used one of the tools developed by TI-DSP in 2014 Government Defense Anticorruption Index, a corruption risk assessment method, which allows to assess the processes and procedures in the defense sector and compare them with the experiences of other countries in the world carried out in 82 countries worldwide. As a result of the research conducted in the 5: political, financial, personnel, operations and procurement risk areas in defense sector, Armenia was ranked in Band D-, where corruption risks are high. In July 2014 the UK Ministry of Defense organized a discussion, which brought together representatives of Transparency International UK, RA Ministry of Defense and TIAC to discuss the results of the research and recommendations. The parties agreed to use expert support provided by TIAC in certain areas. Taking into account the importance and actuality of the received results, the activities in this field will continue also in 2015.

գործողություններ և գնումներ, կատարված ուսումնասիրության արդյունքներով Հայաստանը դասվեց (D-) խմբում, որտեղ կոռուպցիոն ռիսկերը բարձր են: 2014 հուլիսին Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարությունը կազմակերպեց քննարկում, որին մասնակցում էին Թրանսփարենսի Ինթերնեշնլ Մեծ Բրիտանիայի, ՀՀ ՊՆ և ԹԻՀԿ ներկայացուցիչները: Միջոցառման ընթացքում ՀՀ ՊՆ ներկայացուցիչների հետ քննարկվեցին հետազոտության արդյունքներն ու եզրակացությունները, և կողմերի միջև ձեռք բերվեց համաձայնություն՝ որոշակի ոլորտներում ԹԻՀԿ փորձագիտական աջակցությունը օգտագործելու վերաբերյալ: Հաշվի առնելով ստացված արդյունքների կարևորությունն ու արդիականությունը՝ այս ոլորտում գործունեությունը կշարունակվի նաև 2015թ.:

«Հայաստանի պաշտպանության հաստատություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատում», հունիս 2014
 “Assessment of Corruption Risks in Defense Establishment in Armenia”, June 2014



Հատված ԹԻՀԿ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ Մեծ Բրիտանիայի (ՄԲ) ներկայացուցչության և ՀՀ ՊՆ համատեղ մամլո հաղորդագրությունից.

Վեր են հանվել չորս ոլորտներ, որոնցում նախարարությունը կարող է հենվել ԹԻ ՄԲ ներկայացուցչության և ԹԻՀԿ-ի փորձագիտական աջակցության վրա

1. ահազանգողի պաշտպանության և բողոքարկման մեխանիզմների վերանայում և հզորացում,
2. խորհրդարանի կողմից պաշտպանության ոլորտի բյուջեի վերաբերյալ տեղեկատվության ստացման հնարավորությունն ու ոլորտի վերահսկման պրակտիկան բարելավելուն ուղղված առաջարկությունների ներկայացում,
3. ներդրումը Հանրային ոլորտի տեղեկատվության պաշտպանության մասին օրենքի նախագծում,
4. գնումների կանոնակարգերի և լավ փորձի բարելավում:

An excerpt from TIAC and Ministry of Defense open dialogue on combating corruption in the defense sector

